ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 19 փետրվարի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղ. Գառնիկ Վարդանյանի դիմումով գործը քննության
ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղ. Գառնիկ Վարդանյանը 12.02.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.11. հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Տվյալ անհատական դիմումի և կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ սույն անհատական դիմումի քննությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ կետի՝ անհատական դիմումները ՀՀ սահմանադրական դատարան կարող են ներկայացվել դատական ակտի վիճարկման հնարավորություններն սպառելու պահից ոչ ուշ, քան 6 ամիս հետո: Դիմողի կողմից նշված վեցամսյա

ժամկետը բաց է թողնված, քանի որ հիշյալ ժամկետի հաշվարկման սկզբի պահը, տվյալ դեպքում, պետք է համարել ՀՀ վճռաբեկ դատարանի 17.06.2009թ. ընդունած որոշումը (թվով երկրորդ), այլ ոչ թե 16.12.2009թ. որոշումը (թվով երրորդ), ինչպես կարծում է դիմողը: Վերջինիս նկատմամբ ՀՀ վճռաբեկ դատարանի 17.06.2009թ. որոշմամբ առաջին անգամ արդեն իսկ կիրառվել է ՀՀ քաղ. դատ. օր.-ի վիճարկվող դրույթը, ուստի այդ պահից սկսած դիմողը կարող էր դիմել ՀՀ սահմանադրական դատարան:

Բացի դրանից, դիմողի կողմից դիմումի հիմնավորման բավարար իրավական փաստարկներ բերված չեն, իսկ հիմնավորումները գերազանցապես վերաբերում են վիճարկվող օրինադրույթի՝ դատարանի կողմից կիրառման իրավաչափության հարցին (ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման 8-րդ և 9-րդ կետեր):

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերով, 69-րդ հոդվածով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Գառնիկ Վարդանյանի դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

19 փետրվարի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-5